

գրութեանց մէջ։ իսկ իրու թուական անուն կարելի էր գործածել մէկ բառն, որ զուտ հայերէն էէ և շատ վայելուշ կերպով և յաճախ գործածուեր է ժդ դարէն 'ի վեր և անկէց ալ առաջ, որուն անթիւ են օրինակք։

Գալ անգամ համառօտիւ պիտի խօսինք, թէ մի ինչպէս կարելի և վայելուշ է գործածել աշխարհաբար գրութեանց մէջ։      \*\*\*

## ՀԻՆ ՔՆԱՐ

### ՏԱՂԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԻՆ

Տիրութիւնուր կոյս, մայր մարմնացելոյ Բանին,

Մաքուր կուսութեամբ ծընար տրղայ ըզՑէրն։

Տաճար հոգեւոր Խագաւորին Երկնից

Առաքեցելոյն 'ի Բայրական ծոցոյ։

Բարունին էից իմաստութիւնն Հօր՝

Առ քեզ խոնարիեալ շուշանափայլ հովիտ։

Բախական բայիւք Երգաբանեալ գոչեմք,

Հարմն Երկնից դըշխոյ, ուրախացիք բերկրեալ։

Ծընութիւն կուսից աւետաբեր կանանց,

Բաց լրւանելով զանիճաբեր Երկունսն։

Յօղ 'ի Հերմինէ վայր 'ի Սիրվն Խեղեալ,

Գեղմն իմանալի 'ի քեզ իցեալ Հոգւոյն։

Հինաւուրցն Աստուած՝ մանուկ 'ի քէն յայ ոնեալ։

Մորենի Վառեալ զեզեզ Մովսէսի տեսեալ։

Հիւսակ հոգեւոր եւ Խօթնարփեան շնորհաց,

Զահ Վառեալ լրւով Զաքարիաս ետես։

Փունց վարդից յեւեալ անուշանոտ հոգւով,

Խընկարեր հովիտ, զըմուռ, ստաշն, հալուէ,

Փառաց Խագաւորն քեւ 'ի տաճարն Եկեալ։

Սմէռն զընծայր քառասնօրեայ մանկամբն։

Բառակերպ աթոռ սուրբ Ճերունին գրտաւ

Ի գիրկս իւր բարձեալ զ'ի քերովքէս նրստեալն։

Քըրստոսի Փքրկչն ընդ Ճերունւոյն գոշեմք,

Արծակեալ եւ զմնզ 'ի կապանաց մեղաց։

1. Վաղուց հետէ կայր մին անօրու յոդ (փոխանակ մի մասնկին), որ հիմակ գաւառ պական է՝ բառերուն առաջը գրուելով. Մին բարի խորհուրդ, և այն. հին առմեն բէնի մեջ եսքը կը գրուեր. Խորհուրդ մին բարի. Տեղաց մին, և այլն. (Քննակ. Քեր. էջ 25)։

2. Բացարձակ թուականներն հին ռամերենի մէջ ԺԱ. Դարէն կը սկսին հիմա կուան ձեն առուուլ, իւ ըպէս Մէկ (գր. մի, միակ), և այլն. — ԺԱ. Դարէն եռցը մէկ կը գործածուի գոյականէ առաջ առնոլով ու անփոփոխ. (Քնն. Քերակ. էջ 33)։